Հաստատում եմ
Տնօրեն՝ Լ.Հարությունյան

Digitally signed by HARUTYUNYAN LILIT 5810860575
Date: 2023.09.01 04:00:34 PDT

# Դասղեկի տարեկան աշխատանքային պլան

2023-2024 ուստարի

Արագածոտնի մարզ
<<Ուշիի Ն.Աղբալյանի անվան միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ

Դասարան՝7-րդ

Դասղեկ՝Հ.Նազարյան

# ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

(դասարանի ընդհանուր բնութագիրը)

Ընդհանուր առմամբ աշակերտներն ունեն բավարար ընդունակություններ: Կա գերազանց 2, հարվածային 2 սովորողներ : Դասարանի կոլեկտիվը համախմբված է: Աշակերտները ընկերասերեն, պատրաստակամորեն կատարում են դասղեկի հանձնարարությունները: Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում:Ուսումնա-դաստիարակչական նպատակովպետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :

# ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Հոգևոր դաստիարակություն: Այս նպատակով աշակերտների մոտ սերմանվել է սեր և հարգանք քրիստոնեության, հայկականբազմադարյան մշակույթի, գրերի հանդեպ:

2.Գեղագիտական դաստիարակություն: Ֆիլմերի միջոցով ցուցադրվել և բացատրվել է, թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսում եմ աշակերտների կարծիքները ցանկացած նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ: Արվեստը գեղագիտական դաստիարակության անբաժանելի մասն է:

Կլսենքդասական երաժշտություն, կփորձենք վերարտադրել այն զգացողությունները, որոնք ունենում ենք դասական երաժշտություն լսելիս: Կծանոթանանք աշխարհահռչակ նկարիչների գործերին: Կայցելենք Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն:

3.Ռազմահայրենասիրական դաստիարակություն :
Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ:Նշվել է մի շարք ֆիդայիների անուներ և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստի ձևերը: Դասղեկի ժամերի ընթացքում քննարկվել են <<Իմ երկրի պատմական իրադարձությունները>>,
<<Պահպանենք մեր երկիրը>> խորագրերով թեմաները:
Քննարկել նաև քառօրյա, քառասունչորսօրյա պատերազմները, դրանց հետևանքները…

4. Ֆիզիկական դաստիարակություն:Դասապրոցեսին ցուցաբերելակտիվություն :
Բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները:ֆիզվարժությունների հնարների միջոցով:

5.Աշխատանքային դաստիարակություն:Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը:Տալ աշակերտներին այն գաղափարը , որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:

6.Բնապահպանական դաստիարակություն:Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ, որոնք առկա են իրենցշրջապատում և այդ խնդիրը գլոբալ է:
Կազմակերպվել են զրույցներ, ուղղված աշակերտների շրջանում,դաստիարկության այս տեսակի զարգացմանը :

7.Դպրոց-ընտանիք կապ: Երեխաները պետք է հասկանան, որընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց -ընտանիք կապը, որպեսի աշակերտները ավելի լավ սովորեն:

| N | Ուսումնական շաբաթներ | Դասղեկի ժամի թեման | Ամսաթիվ |
|---|---|---|---|
| 1 | 01.09-09.09 | Գիտելիքի օր(դասարանի ավագի ընտրություն,հերթապահության կազմում) | 06.09.23 |
| 2 | 09.09-16.09 | Նոր ուսումնական տարվա ծրագրի կազմում,առաջարկությունների արկղի պատրաստում | 13.09.23 |
| 3 | 17.09-24.09 | Պետական խորհրդանիշներ:ՀՀ անկախությանը Նվիրված քննարկում | 20.09.23 |
| 4 | 25.09-30.09 | Ինչո՞ւ լինել « լավ ընկեր» բաց քննարկում | 27.09.23 |
| 5 | 01.10-07.10 | «ՈՒսուցչի կարևորությունը մեր կյանքում » քննարկում | 02.10.23 |
| 6 | 08.10-15.10 | Ի՞նչ է մասնագիտական կողմնորոշումը | 09.10.23 |
| 7 | 16.10-23.10 | Ինչպե՞ս վարել առողջ ապրելակերպ | 16.10.23 |
| 8 | 02.11-07.11 | «Էկոլոգիա և բնապահպանություն» զրույց | 04.11.23 |
| 9 | 08.11-15.11 | «Վատ սովորույթներ»:Դրանցից պաշտպանվելու միջոցները | 11.11.23 |
| 10 | 16.11-23.11 | Զրույց ներառական կրթության մասին | 18.11.23 |
| 11 | 24.11-30.11 | «Իմ Հայրենիք »,ի՞նչ եմ պատկերացնում հայրենասիրություն ասելով | 25.11.23 |
| 12 | 01.12-08.12 | Հայ եկեղեցու դերը հայապահպանության գործում | 03.12.23 |
| 13 | 09.12-14.12 | Առաջադիմության վերլուծություն:Անհատական ելույթներ | 10.12.23 |
| 14 | 15.12-20.12 | Կիսամյակի ամփոփում | 17.12.23 |
| 15 | 22.12.22 | Ամանորյա հրաշքներ | 22.12.23 |